ՕՏԱՐԱԶԳԻՆԵՐԸ ՐԱՖՖՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ «ԿԱՅՃԵՐ» ՎԵՊՈՒՄ

Հայ մեծ վիպասան Րաֆֆու ստեղծագործությունը տասնամյակներ շարունակ ոչ միայն կրթել ու դաստիարակել է ամբողջ սերունդներ՝ նրանց մեջ ներարկելով հայրենասիրության ու ազատասիրության կայծեր, այլև մի անզուգական հանրագիտաքան է, ուր հայ մարդու կողքին իրենց ազգային յուրահատուկ նկարագրով ապրում ու գործում են օտարազգիները:

Րաֆֆին օտար ազգությունների ներկայացուցիչներին անդրադարձել է ոչ միայն գեղարվեստական երկերում, այլև բազմաթիվ հրապարակախոսական ու գրական-քննադատական հոդվածներում: Րաֆֆու համոզմամբ, եթե հայն ուզում է մի «բախտավոր ապագա», ապա հաջողության հասնելու համար պիտի գործի ոչ թե օտարներից մեկուսացված, այլ հաշվի նստի հարևան ժողովրդների ազգային առանձնահատկությունների հետ՝ օգտվելով ոմանց հասարակական-քաղաքական դրությունից և զգուշանալով մյուսների՝ բնավորություն դարձած նենգություններից: «Քրդական միություն», «Ուսանող երիտասարդությունը», «Ազատությունը Թուրքիայում», «Թուրքիա», «Պարսկաստանի զինվորական կազմակերպությունը», «Վաճառականությունը Պարսկաստանում», «Սրբազան պատերազմը և քրիստոնյաների վիճակը Փոքր Ասիայում», «Տարոնի և Վասպուրականի անցյալ և արդի վիճակը» հոդվածներում և բազմաթիվ այլ նամակներում ու ակնարկներում, որոնք ունեն գրության տարբեր տարեթվեր ու շարժառիթներ, Րաֆֆին նյութին քաջատեղյակ ու բանիմաց գրողի վարպետությամբ ոչ միայն ներկայացնում է օտար միջավայրերի, օտար ազգությունների մարդկանց խառնվածքի ուսումնասիրությունը, այլև առողջ ու ապագային վերաբերող եզրակացություններ է անում, ճանապարհ ուղենշում՝ միշտ մնալով սեփական ժողովրդի ազգային արժեքները պահպանել քարոզողի հաստատուն դիրքերում: Չկա մարդկային հասարակության մի ոլորտ, որ շրջանցի Րաֆֆի հրապարակախոսն ու գրողը. ընդ որում նա չի սահմանափակվում միայն հայկական նեղ միջավայրի նկարագրությամբ: Րաֆֆու ուսումնասիրություններն ու գրական արգասիքներն ընդգրկուն են դրացի ժողովուրդների ու ազգությունների կյանքը նույնպես: Կրոնական, տնտեսական, կրթական, քաղաքական և այլ տեսանկյուններից քննելով հարևան ժողովուրդների դրությունը՝ Րաֆֆին ցուցաբերում է սթափ և օբյեկտիվ մոտեցում: Րաֆֆի գրողի կերպարաստեղծման արվեստը կարևորում է ազգային պատկանելությունը, նույնիսկ այնպիսի հանգամանք, ինչպիսին է քրդերի՝ զանազան ցեղա-

խմբերի բաժանված լինելը. նրա գրական երկերում արժանանում է մանրամասն ու բազմակողմանի վերլուծության և դրանից բխող հետևությունների ու կերպարների ստեղծման:

Օտարազգիների նկատմամբ Ռաֆֆու դիտավորությունները տարբեր բնագավառներ ընդգրկելուց զատ ունեին նաև գործնական կիրառություններ: Մեծ գրողը ոչ միայն խոսքով, այլև հնարավորության դեպքում նաև գործով էր ուզում ապացուցել, որ օտարների հետ կապված իր ծրագրերը երևակայական չեն և ենթակա են կյանքի կոչվելու:Թավրիզի Արամյան ազգային դպրոցում դասեր տալուն զուգահեռ Ռաֆֆին վարում էր նաև ընթերցարանի ընկերության ատենադպիրի պաշտոնը: Ընթերցարանի տարեկան հաշվետվության մեջ Ռաֆֆին գրում է.«Ընթերցարանի ընկերության նպատակը չէ միայն նեղ հայկական շրջանին բավականություն տալ յուր գործունեությամբ. այլ նա միշտ աշխատել է և պիտի աշխատե, որ օտարազգիներն նույնպես օգտվին նրանից: Այս մտքով ընթերցարանի վարչությունը աշխատել է որքան ներում է իր նյութական վիճակը, բերել տալ նաև զանազան օտարազգի գրքեր, որոնց թիվը հասնում է այժմ 217 հատորի:Եվ ընթերցարանը մասամբ հասած է համարում իրան յուր նպատակին. որովհետև նա յուր բաժանորդների թվում ունի այժմ մի քանի եվրոպացիներ և պարսիկներ» /10, 465/: 1875 թվականի հուլիսի 15-ին գրված «Նամակ Դավրեժից» վերնագրով թղթակցությունում Ռաֆֆին, անդրադառնալով պարսկահայերի կրթության գործին, առաջարկում է հայ աշակերտների հետ կողք կողքի ուսուցանել նաև պարսիկ երեխաներին. «Դա միակ միջոցն է՝ պարսիկների և հայերի, այդ երկու միմյանց հետ ցեղակից ազգերի մեջ սեր և միաբանություն տարածել. պետության համար հավատարիմ և կրթյալ հպատակներ պատրաստել, և հայոց դպրոցում եվրոպական գիտությանը ծանոթացած պարսիկ աշակերտների միջոցով լուսավորությունը մտցնել նույնիսկ մահմեդական ժողովրդի մեջ» /10, 292/: Ռաֆֆու այն համոզմունքը, թե լուսավորության կայծերն ընդունակ են մաքրագործելու մահմեդական ժողովուրդներին իրենց կրոնական մոլեռանդությունից ու նախապաշարմունքներից, իր արտահայտությունն է գտել ոչ միայն բազում հոդվածներում, այլև գրական երկերում: Թե՛ Վարդանի («Խենթը») երազում և թե՛ հատկապես «Կայծերի» վերջում Ռաֆֆու այս հայեցակետը դրսևորվում է քրդերի վերաբերմամբ: Քաղաքակրթությունն ամենակարող է և ընդունակ է ոչնչացնելու ամեն մի վայրագ ուժ ու պիղծ երևույթ, ոչնչացնելու բնականոն ընթացքով: Ռոմանտիկ գրողը նույն համոզման էր, երբ ավարտում էր «Կայծերը»: «Քաղաքակրթության լույսի առաջ չդիմացան նրանք (քրդերը): Քաղաքակրթությունը իր անողոք պայմաններով լուծեց, մաշեց նրանց, որովհետև իր հետ առաջ գնալ չկարողացան: ...Եվ այսպես, այն գազանները, որոնց բարբարոսությունները ոչ մի զորությամբ հնար չէր լինում զսպել, ընկճվեցան, տրորվեցան քաղաքակրթության երկաթյա պայ-

մանների ներքո: Սրի և արյան մրցության մեջ նրանք դիմացան, բայց կուլտուրական մրցությունը սպանեց նրանց»(6,440): Ցավոք, Ռաֆֆու այս տեսակետը անիրատեսական էր ոչ միայն նրա կենդանության օրոք, այլև գործնականորեն հերքվեց ժամանակների բովում: Լուսավորության ու քաղաքակրթության կայծը, որ այնպես թևավորում ու հուսադրում էր երազող գրողին, կարող էր բարելավել հասարակության վիճակը, բարձրացնել նրա գիտակցականությունը, բայց ի զորու չէր փոխելու, գլխիվայր շրջելու ժողովրդների ճակատագիրը:

Եթե կրթական ու տնտեսական ոլորտում հայերն ըստ Ռաֆֆու պիտի գործեն հարևանների հետ ձեռք ձեռքի, ապա քաղաքական ասպարեզում հային հարկ է լինել ավելի շրջահայաց: Ռաֆֆին ծնվել ու հասակ էր առել Պարսկահայաստանում, ճամփորդել էր Արևմտյան Հայաստանում, Ղարաբաղում և Սյունյաց աշխարհում, ապրել այնպիսի բազմազգ քաղաքում, ինչպիսին Թիֆլիսն էր: Նա սեղան էր նստել պարսիկի տանը, հյուրընկալվել ասորու, եզդու ու քրդի սեղանից, գիտեր նրանց ապրելակերպի ու ազգային խառնվածքի բոլոր կողմերը: Իր հուշերում Ավագ Ավթանդիլյանը հաճախ է պատմում այդօրինակ այցելությունների մասին: Ահա թե ինչ է ասել նման մի հյուրասիրության ժամանակ Ռաֆֆին.«Մեր հայերը խորշում են նրանց (պարսիկների) հետ հարաբերություն ունենալուց, բայց դա սխալ է, պետք է շփվել նրանց հետ, պետք է կարծիքներ փոխանակել և մտերմական հարաբերություն հաստատել, որովհետև մենք ապրում ենք նրանց հետ միասին, և, մանավանդ, որ նրանք են տիրող տարրը»: «Նամակ Կ. Պոլսից» հոդվածում Ռաֆֆին ազգային միաբանության կոչ է անում և հաջողության հասնելու համար առաջարկում համագործակցել հարևան ազգությունների՝ հույների, ասորիների ու հրեաների հետ. «Շատ նեղ կլիներ այդ հայացքը և միակողմանի, եթե հայերը յուրյանց հասարակական շահերը պահպանելու համար միայն կաշխատեին միանալ յուրյանց այլադավան ազգայինների հետ, առանց ուշադրություն դարձնելու մյուս ազգությունների վերա, ինչպիսի են հույները, ասորիները, հրեաները և այլն» (10,130):

Եթե հրապարակախոս Ռաֆֆին առաջարկում ու փրկության ուղիներ է նախանշում, ապա վիպասան Ռաֆֆու հերոսները գործում են՝ առաջնորդվելով այդ սկզբունքներով: «Կայծերի» հերոսը՝ Ասլանը, ասում է. «Այս նահանգում կան և ուրիշ ազգություններ, որոնք մեզ վիճակակից են: Հրեաների, ասորիների, բոշաների և եզիդիների դրությունն ավելի վատ է, քան թե հայերինը: Այս թշվառակաները նույնպես մարդիկ են և մեզ նման մարդիկ, նրանց էլ պետք է ազատությունը: Նրանք մեր բարի դրացիներն և լավ կենակիցներն են, նրանք պատրաստ են մեզ հետ գործելու...»(5,573): Ասլանն ու իր ընկերներն ուզում են դաշնակցել ասորաց «ջոլո» կոչվող մի քաջազնական ցեղի հետ, որը քրդի ու

թուրքի իշխանությունից խուսափելով՝ անհիշելի ժամանակներից պահպանել էր իր անկախությունը:

Ասորիների այս ազատատենչ ցեղը կառավարվում է պատրիարքի՝ Մար-Շիմոնի կողմից, որը «միևնույն ժամանակ հասարակ զինվոր է, հայրենիքի պաշտպան»: Օտար ցեղի՝ ջոլոների օրինակը խրախուսելի է, և «Կայծերի» հերոսներն ուզում են հայերի համար ևս ստեղծել նման մի երկիր, ուր հաստատված կլինեն խաղաղությունն ու արդարությունը: «Ջոլոների օրինակը մի մեծ խրատ է մեզ, հայերիս համար, թե մենք էլ կարող ենք մեր լեռներում ազատ և հանգիստ ապրել, եթե մեր ազատությունը կամենայինք պաշտպանել մեր սրով և արյունով: Բայց մենք ունե՞նք այնպիսի հոգևորականություն, ինչպես Մար-Շիմոնը, մենք ունե՞նք այնպիսի ժողովուրդ, ինչպես ջոլոն: Հայը սրից այնպես է վախենում, ինչպես դևից...».-ասում է Ասլանը (5,575): Ասորաց պատրիարք Մար-Շիմոնի իրական կերպարը հիացմունք է պատճառել Ռաֆֆուն, այդ իսկ պատճառով «Կայծերի» I հատորում նա անդրադարձել է օտար հոգևորականի գործունեությանը: Այդ դրական վերաբերմունքի մասին վկայում է նաև Ավագ Ավքանդիլյանն իր հուշերում: Քրդերի հետ ունեցած մի միջադեպից հետո Ռաֆֆին ասել է. «Բացի այդ՝ հանգամանքներն այժմ այլ կերպարանք են ստացել: Ասորոց պատրիարք Մար-Շիմոնը զենք է կրում իր վրա և իր զինակիր հրացանակիրներով ընկնում է քուրդեիր ետևից և հալածում է նրանց»:

Ռաֆֆին հայ նոր գրականության ձևավորման կարևոր նախապայմաններից մեկն էլ համարում էր հայերից բացի օտարազգիների կյանքի համապարփակ արտացոլումը հայալեզու գրականության մեջ: «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածում, հանդես գալով իր գիտական վաստակի ներկայացմամբ ու գնահատմամբ, նա գրում է. «Աբովյանի հետևողները Աբովյանի անշնորհք աշակերտները եղան: Դրանց համար հայկական վեպ նշանակում էր այն, ինչ որ միմիայն հային է վերաբերում, առանց մտածելու, որ հայը յուր կյանքում շփվում է օտար ազգերի հետ, որոնք նրա դրացիներն են, և որոնք նրա հետ միասին բաժանուն են կյանքի միևնույն հանգամանքները: Այբովյանը յուր գրքի մեջ տեղ տվեց օտարազգիներին, բայց նրա հետևողները ազգասիրաբար մերժեցին նրանց» (12,140): Հոդվածի հետագա շարադրանքում ևս կարևորելով դրացի՝ օտար ազգությունների կյանքի ուսումնասիրության ու պատկերման անհրաժեշտությունը հայերիս համար, Ռաֆֆին նշում է, որ այս տեսանկյունից հայկական լրագրերից գովելի է միայն «Մշակի» որդեգրած գործելաոճը: ««Մշակը» ընդարձակեց, լայնացրեց հայկական աշխարհի նեղ հորիզոնը: ...Նա ուշադրություն դարձրեց և հայի դրացի օտարազգիների վրա, որոնց վիճակի ուսումնասիրությունը հայոց լրագիրը յուր պարտքը չէր համարում»:(12,143) Օտարազգիներին վերաբերող համանման դիտողություն կա նաև հեղինակի «Գրոց ու բրոց...» հոդվածում: Ըստ արժանվույն գնահատելով ու վերլուծելով

հայտնի բանահավաք Գ.Արվանձտյանցի գրի առած ավանդությունները՝ Ռաֆֆին գրում է .«Բացի հայերից ավելորդ չէր լինի ուշադրություն դարձնել և ուրիշ ազգությունների վերա, որոնց հետ դրացություն ունեն հայերը, և տեղեկություն տալ նրանց միմյանց հետ հարաբերությանց մասին»(10,242): Այսպիսով Ռաֆֆին մեկ անգամ չէ, որ հիշատակում է օտարազգիների վերաբերմամբ իր դիտավորությունները, դրանց կենսունակությունն այնքան անառարկելի է, որ նա հենց առաջինն է քայլեր ձեռնարկում այն ասպարեզում, որտեղ գործում էր անձնազոհ նվիրումով ու մեծ հավատքով: «Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան չէր մտածել օտար ազգերի կյանքը հայոց վեպի նյութ դարձնել: Մենք տվեցինք առաջին օրինակը, երբ գրեցինք «Հարեմը», «Բիբի - Շարաբանին», «Խազ-փուշները» և այլն»(12,145):

Բացի նշված գործերից Ռաֆֆու վեպերում հանդիպում են օտարազգիների բազմաթիվ կերպարներ, որոնք հիացնում են իրենց կերտման բարձր արվեստով, ճշմարտացիությամբ, ազգային խառնվածքի հարազատությամբ ու կենդանությամբ: Նրա թուրք, քուրդ, պարսիկ՝ մահմեդական հերոսները չարիքի այն կծիկն են, որի թելերը բացելով՝ վիպասանը հասու է դարձնում օտարի հոգեբանությանն ու կենսակերպին:

Ռաֆֆու օտար հերոսներն աչքի են ընկնում ոչ միայն ազգային պատկանելության բազմազանությամբ, այլև ամեն մեկն իր վրա կրում է անհատականության կնիքը: Այժմ անդրադառնանք «Կայծեր» վեպի այլազգի կերպարներին: Ելնելով իր վեպերի ազգային-ազատագրական գաղափարական բովանդակությունից՝ Ռաֆֆին մեծ տեղ է հատկացնում «տիրող տարրի»՝ մահմեդականների կյանքի նկարագրությանը:

Այդ են վկայում «Կայծերի» մի քանի վերնագրեր. «Ի՞նչ է քուրդը և ի՞նչ է թուրքը», «Ի՞նչ է պարսիկը», «Քրդուհին և հայուհին», «Քուրդը քրիստոնեական սրբարանի մեջ», «Եզիդիներ»: «Որպեսզի գիտենալ, թե ինչ դրության մեջ էին այն ժամանակ հայերը, պետք է նախ ծանոթանալ տիրող ազգի՝ քրդերի բնավորության և նրանց քաղաքական կազմակերպության հետ», -կարդում ենք «Կայծերում» /5, 463 /: Հարևան ժողովուրդների կյանքի և հայերի հետ նրանց փոխհարաբերությունների լայնակտավ նկարագրություններն գեղարվեստականորեն այնքան ռեալիստական են, որ անգամ Ռաֆֆու ամենաոխերիմ թշնամին՝ պ. Հայկունին, ինքն իրեն հակասելով, նկատում է, թե ««Կայծերի» մեջ գեղեցիկ կերպով նկարագրված են քրդերը, թուրքերը և պարսիկները»(11,396): Ռաֆֆու վեպերում իրենց վառ անհատականությամբ առանձնանում են հատկապես քուրդ կերպարները: Հեղինակը քաջատեղյակ էր այս ժողովրդի և նրա տարբեր ցեղերի նիստուկացին, բարքերին, ազգային նկարագրին: Ճիշտ է, նրանք հանդես են գալիս հիմնականում որպես երկրորդական, էպիզոդիկ կերպարներ, բայց իրենց խառնիճաղանջ բազմազանությամբ ամբողջացնում են քուրդ

ժողովրդի հավաքական կերպարը վեպում: «Կայծերի» հիշարժան քուրդ հերոսներից է Շարիֆ-բեկը, որին փաշան ներկայացնում է որպես «քրիստոնյա բնակիչների բարեխնամ պաշտպան և հովանավորող», իսկ Ասլանի ու Ֆարհատի հիշողության մեջ վերականգնվում է նույն ինքը՝ Սուրբ Տիրամոր վանքի կողոպտիչը: Զալալների ցեղապետ քուրդ Շարիֆ-բեկը բանակռվի մեջ է մտնում իրեն եվրոպացի բժիշկ ներկայացնող Ասլանի հետ: «Քուրդ բեկի թուխ դեմքի վրա երևացին քրտինքի կաթիլներ, որ սրբեց նա իր շապիկի քառանկյունի ծևով քարշ ընկած թևքով: Սխալ կլիներ մտածել, թե ամոթից լինեին այդ կաթիլները: Այլ նրա սրտում բորբոքվում էր բարկության կրակը, թե ինչպես մի գավուր համարձակվում է նրա երեսին անարգել նրան, իսկ ինքը չի կարող ծեռքը տանել դեպի իր սուրը և պատժել եվրոպացի գավուրի հանդգնությունը» (4,222): Քուրդը դիմակազերծ է արվում, իսկ «Կայծերի» հերոսը խորհում է. «Կարծես, մի ներքին սև թել կապում էր այդ բոլոր մարդկանց սրտերը միմյանց հետ: Դրանք ամենահայտնի չարագործությունները բարի ծևի մեջ ամփոփելու վարպետությունն ունեին» (4,223): Հասարակ քուրդ ավազակները հայերի դեմ ուղղված չարիքը մարմնավորող սանդուղքի ստորին աստիճանն են միայն ներկայացնում, մինչդեռ սանդուղքը տանում է դեպի վեր՝ դեպի քուրդ բեկերը, մահմեդական և անգամ հայ հոգևոր բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց դիվային ծրագրերով ու մեղսագործ իրազեկությամբ են գործում քուրդ, թուրք ու պարսիկ հայահալած մարդասպանները: Այս դառը ճշմարտությանն են հանգում Ռաֆֆու գաղափարական հերոսները, որն ավելի է սաստկացնում նրանց ատելությունը տիրող հասարակական վիճակի դեմ:

Ռաֆֆին, ներկայացնելով բարբարոս ու թալանչի քրդին, նրա արարքները, բացասականի կողքին չի անտեսում նաև այս ժողովրդի ազգային կենցաղի ու բնավորության գեղեցիկ գծերը, ինչպիսիք են քաջությունը, պատվախնդրությունը, նահապետական պարզամտությունը և այլն: Քուրդ կինը որպես չունի ամոթ, նույնպես և չի կարող անհավատարիմ գտնվել. «Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանված տղամարդից հետո, քուրդ կնոջ համար համարվում է նախատինք: Նա մնում է միշտ այրի, մխիթարում է իրան այն քաղցր հիշողություններով, թե իր այրը մի «լավ ավազակ» էր, թե նա մնաց միշտ մաքուր երկչոտության արատից»(4,465): Կամ. «Քուրդը խաբեբա չէ. նա հավատարիմ է իր խոստմունքը կատարելու մեջ: Նա մնում է միշտ ճիշտ իր պարտքը վճարելու մեջ: Վճարել այն, ինչ որ պարտքով էր առած, և կողոպտել ուրիշի սեփականությունը՝ երկուսն էլ միօրինակ սուրբ են նրա համար»(4,466): Օտարազգիներին վերաբերող ուշագրավ ու տպավորիչ դրվագներից է քրդական ցեղերից մեկի՝ եզդիների կյանքի ու բարքերի նկարագրությունը, որ հանդիպում է «Կայծեր» վեպի համանուն գլխում: «Կայծերի» հերոսներին եզդի բեկի վրանն էր բերել նրանց հետ դաշնակցելու գաղափարը: Եզդիների բնակա-

վայրի անկրկնելի գունագեղ ու բնական ազգային կոլորիտը իր լրացնող պարագաներով հանդերձ (ընթրիքի պատրաստությունը, հյուրասիրությունը, զրույցների թեման, քուրդ երգիչները) հիշեցնում է Ավագ Ավթանդիլյանի՝ Ռաֆֆու մասին հուշերը, երբ նրանք երկուսով հյուրընկալվել են քուրդ Ալի աղայի հարկի տակ: Անհավանական չէ, որ հենց այս այցելությունն էլ դարձել է «Կայծերի» «Եզիդիներ» գլխի գրական ատաղձը՝ ապահովելով վիպական հյուսվածքի այս հատվածի բարձր գեղարվեստականությունն ու ազգային կոլորիտի հարազատությունը: Ասվածի վկայությունն են և ընթրիքի ծեսի նկարագրությունը, և՛ քուրդ երգիչների ելույթը, և նրանց երգի դյուցազնական բովանդակությունը. այս բոլորը կան Ավթանդիլյանի հուշերում, և այս ամեն իրականը հետագայում իր անսահման երևակայության ու վարպետության շնորհիվ կենդանացնում է Ռաֆֆին «Կայծերում»:

Խոսելով օտարազգիների, հատկապես արյունարբու թուրքերի, քրդերի ու պարսիկների մասին Ռաֆֆին տուրք չի տալիս ազգային զեղումներին: Որքան մեծ է նրա ատելությունն ու ցասումը ավարառու ցեղերի ասպատակությունների և իշխող օտար զավթիչների վարած հայահալած քաղաքականության դեմ, նույնքան խիստ է նրա մեղադրանքը սեփական ժողովրդի թուլակամության ու ստրկամիտ հնազանդության հանդեպ. «Արդարև, ես ընդդեմ եմ վայրենության, բայց անձնապաշտպանությունը սուրբ է մարդու համար նույնքան, որքան արդար վրեժխնդրությունը»-ասում է Ռաֆֆու գաղափարական հերոսը (5,598): Կարևորելով օտարների հետ շփման ու նրանց բազմակողմանի ճանաչման անհրաժեշտությունը՝ Ռաֆֆին հայ ժողովրդի փրկությունը տեսնում է միմիայն ազգային միաբանության ու միասնականության մեջ: Նույն հերոսը՝ Ասլանը ասում է. «Օտարի օգնությունից մեզ շահ չկա: Դժբա՜խտ է այն ազգը և մի՜շտ դժբախտ կմնա, որ օտարի օգնությանը կարոտ կլինի: Ոչ ոք իր հոր հոգու համար մեզ չի օգնիլ. նա պետք է տասը բան առնե մեզանից, որ մի բան տա: «Ողորմություն խնդրողի երեսը միշտ սև կլինի և քսակը դատարկ»... Օտարի օգնությունը նման է մի նեցուկի, որը հենց որ ետ քաշեցիր, կտեսնես դարձյալ ցած կընկնի նրա վրա հենված առարկան...»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռաֆֆի երկերի ժողովածու 12 հ., Երևան 1983:
2. Խ.Ե. Սամվելյան, Ռաֆֆի, Երևան, 1987:
3. Ս.Ն. Սարինյան, Ռաֆֆի, Երևան, 1985:
4. Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986: